ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

23.05.2024 N 06/11.2/7404-2024

ՀՀ Կոտայքի մարզ,

Աբովյան համայնքի ղեկավար

պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

2023 թվականի ապրիլի 11-ի

N Ե-2502 գրություն

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի վարչական տարածքում գտնվող 07-002-0048-0197 կադաստրային ծածկագրով 4.0411 հա մակերեսով (որից 0.1315 հա մակերեսով հողամասը ընդհանուր օգտագործման ճանապարհ է, իսկ 0.309 հա մակերեսը՝ կանաչ գոտի) հողամասում բնակելի թաղամաս կառուցելու նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պայմանն ու ամփոփ տեղեկանքը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Դ-1161
«23» 05 2024 թ.

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է վերը նշված փոփոխությունն ընդունել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակվող ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Աբովյան քաղաքի փաստաթղթում:

Առդիր՝ 3 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Գևորգյան